ՀՀ ԳԱԱ-ում քննարկվեց «Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագրի» իրականացման գործընթացը

Ս.թ. մայիսի 19-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում քննարկվեց «Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագրի» շրջանակներում 2022 թ.-ին նախատեսվող ծրագրերի իրականացման գործընթացը: Քննարկմանը մասնակցեցին ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղար Արթուր Իշխանյանը, ՀՀ ԳԱԱ ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Գևորգ Փանոսյանը, ՀՀ ԳԱԱ հաշվապահական հաշվառման և հաշվետվության բաժնի գլխավոր հաշվապահ Լաուրա Առուստամյանը, ՀՀ ԳԱԱ գիտակազմակերպչական վարչության պետ Ասյա Գալոյանը, ՀՀ ԳԱԱ իրավախորհրդատու Ռիմա Մաթոսյանը, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս-

քարտուղարի օգնական Հերմինե Օհանյանը, ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Ինգա Զարաֆյանը, ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժնի առաջին կարգի մասնագետ Մոնիկա Երիցյանը, «Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագրի» մասնագիտական փորձագիտական խորհրդի անդամներ Հայկ Զաքարյանը, Գևորգ Տեփանոսյանը և Մաքսիմ Սարգսյանը:

«Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագրի» շրջանակներում 2022 թ.-ին նախատեսվում է 6 ծրագրերի իրականացում՝ ընդհանուր 100.000 միլիոն ՀՀ դրամ բյուջեով.

* գիտական սարքերի կամ նյութերի ձեռքբերման մրցույթ
* երիտասարդ գիտնականների վերապատրաստման դրամաշնորհներ
* բարձրորակ գիտական հոդվածների տպագրության մրցանակներ
* հայագիտության և հումանիտար ճյուղերի զարգացման միջոցառումներ
* գիտության հանրայնացման խրախուսման դրամաշնորհներ
* գիտական միջոցառումների իրականացում:

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղար Արթուր Իշխանյանը նշեց. «ԵԳԱԾ-ը ստեղծված է որպես պիլոտային ծրագրերի իրականացման հարթակ, այնպիսի ծրագրերի, որոնց մեծամասշտաբ իրականացումը բարդ է: ԵԳԱԾ-ի ծրագրերով ենթադրվում է իրականացնել կետային ազդեցություններ տարբեր ոլորտների վրա՝ թողնելով լուրջ որակական փոփոխություն»:

Արթուր Իշխանյանն ասաց, որ «Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագրի» բյուջեն ավանդաբար ծախսվել է բացառապես երիտասարդ գիտնականներին աջակցելու նպատակով, և գործավարական ծախսեր չեն կատարվել: «Նույն կերպ է վարվելու նաև Գիտությունների ազգային ակադեմիան: Ունենալով համապատասխան ստորաբաժանումներ՝ ակադեմիան անվճար տրամադրելու է հաշվապահական, իրավաբանական և այլ անհրաժեշտ ծառայություններ ծրագրի մասնագիտական փորձագիտական խորհրդին՝ համապատասխան մրցույթներն ու միջոցառումները նախապատրաստելու և իրականացնելու համար»:

«Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագրի» մասնագիտական փորձագիտական խորհրդի կազմում են Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիայի գիտաշխատող Հռիփսիմե Մկրտչյանը, «YEREVANN» լաբորատորիայի տնօրեն Հրանտ Խաչատրյանը, ՀՀ ԳԱԱ օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոնի գիտաշխատող Ռոբերտ Հակոբյանը, Գերմանիայի Համբուրգի համալսարանի ասպիրանտ Սուսաննա Գևորգյանը, ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հե-

տազոտությունների կենտրոնի շրջակա միջավայրի երկրաքիմիայի բաժնի ղեկավար Գևորգ Տեփանոսյանը, Երևանի պետական համալսարանի ասպիրանտ, «ՔԵՆԴԼ» սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտի գիտաշխատող Մաքսիմ Սարգսյանը, Երևանի պետական համալսարանի ռադիոֆիզիկայի ֆակուլտետի դասախոս, կիսահաղորդչային սարքերի և նանոտեխնոլոգիաների կենտրոնի գիտաշխատող Հայկ Զաքարյանը:

Հայկ Զաքարյանը ներկայացրեց 2022 թ.-ին նախատեսվող ծրագրերի հիմնական նպատակները, պահանջներն ու իրականացման ժամկետները: Գիտական սարքերի և նյութերի ձեռքբերմանն ուղղված ծրագրի նպատակն է նպաստել նոր գիտական խմբերի ձևավորմանը, աջակցել գիտություն նոր մուտք գործող երիտասարդներին:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին